ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄN22

---

*15/05/2012թ.*

*ՎԵԴԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՂԱՍԻ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ՝ ԵՐԵԽԱՅԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԱՐՁԻ ԶԵՂՉ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:*

*Քվեարկության արդյունքում Վեդու քաղաքային համայնքի ավագանին ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի պահանջներով.*

## *ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*Թույլատրել քաղաքապետարանին Վեդի քաղաքի բնակիչ՝ Աղասի Սաղաթելի Աբրահամյանի, թիվ 3 մանկապարտեզ հաճախող երեխայի վարձը զեղչել 100%-ով:*

*Ավագանու անդամներ*

*Է.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ կողմ*
*Լ.ՄԱՆՈՒԿՅԱՆ կողմ*
*Ա.ՍԱՐԳՍՅԱՆ կողմ*
*Դ.ՍԱՐՈՅԱՆ կողմ*
*Ա.ՍԱՖԱՐՅԱՆ կողմ*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՔԱՐՄԵՂՅԱՆ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ**

**ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

# ՈՐՈՇՈՒՄN21

*15/05/2012թ.*

***2012Թ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.***

*Քվեարկության արդյունքում Վեդու քաղաքային համայնքի ավագանին ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.*

## *ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

Քաղաքային համայնքի 2012Ã. µÛáõç»ում կատարել հետևյալ փոփոխությունը.

Ֆոնդային բյուջեի ճանապարհային տրանսպորտ ծախսային ծրագրի / 5113/ շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում /հոդվածը պակասեցնել 2.000.000 դրամով, տարեկան ճշտված պլանը սահմանելով 8.000.000 դրամ և պակասեցված 2.000.000 դրամը տեղափոխել ֆոնդային բյուջեի ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսային ծրագրի 5133 /Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր / հոդվածին, տարեկան ճշտված պլան սահմանելով 2.000.000 ՀՀ ¹ñամ:

*Ավագանու անդամներ*

| | | | |
|---|---|---|---|
| *Է.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ* | *կողմ* | *Լ.ՄԱՆՈՒԿՅԱՆ* | *կողմ* |
| *Ա.ՍԱՐԳՍՅԱՆ* | *կողմ* | *Դ.ՍԱՐՈՅԱՆ* | *կողմ* |
| *Ա.ՍԱՖԱՐՅԱՆ* | *կողմ* | | |

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Վ.ԲԱՐՍԵՂՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
### ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄN20

*15 05/2012թ.*

*ՎԵԴՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ,ԿԱՅԱՆ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԱՆԷՊԻԴԿԱՅԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,437 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:*

*Քվեարկության արդյունքում Վեդու քաղաքային համայնքի ավագանին ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի պահանջով*

*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝*

*Մերժել քաղաքապետարանին Վեդու քաղաքային համայնքի Կայան 1 հասցեում գտնվող սանէպիդկայանի վարչական շենքի զբաղեցրած, սպասարկման և պահպանման համար առանձնացված 0.437հա մակերեսով հողամասը նվիրաբերել պետությանը:*

*Ավագանու անդամներ*

*Է.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ կողմ*

*Լ.ՄԱՆՈՒԿՅԱՆ կողմ*

*Ա.ՍԱՐԳՍՅԱՆ կողմ*

*Դ.ՍԱՐՈՅԱՆ կողմ*

*Ա.ՍԱՖԱՐՅԱՆ կողմ*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ԲԱՐՍԵՂՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N19

15/05/2012թ.

*ՎԵԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՎԵԴԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՌՈԲԵՐՏ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ՄԻՋԵՎ 01.03.2005 Թ.ԿՆՔՎԱԾ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:*

*Քվեարկության արդյունքում Վեդու քաղաքային համայնքի ավագանին ղեկավարվելով <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70 հոդվածի 3-րդ կետի պահանջով.*

## *ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝*

*Վեդու քաղաքապետարանի և Վեդի քաղաքի բնակիչ Ռոբերտ Եղիազարյանի միջև 01.03.2005թ. կնքված վարձակալության պայմանագրի 5-րդ կետում կատարել փոփոխություն՝ 10 տարով վարձակալության ժամկետը փոխարինել 99 տարով:*

*Ավագանու անդամներ*

*Է.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ* կողմ

*Լ.ՄԱՆՈՒԿՅԱՆ* կողմ

*Ա.ՍԱՐԳՍՅԱՆ* կողմ

*Դ.ՍԱՐՈՅԱՆ* կողմ

*Ա.ՍԱՖԱՐՅԱՆ* կողմ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Վ.ՔԱՐՄԵՂՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N18

15 \05\2012թ.

*ՎԵԴՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԱՎԱԳԱՆՈՒ 09.04.2010Թ. ԹԻՎ 3 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 8-ՐԴ ԿԵՏԻՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:*

*Քվեարկության արդյունքում Վեդու քաղաքային համայնքի ավագանին ղեկավարվելով <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70 հոդվածի 3-րդ կետի պահանջով.*

## *ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝*

*Թույլատրել քաղաքապետարանին Վեդու քաղաքային համայնքի ավագանու 09.04.2010թ. թիվ 3 արձանագրության 8-րդ կետի մեջ փոփոխություն կատարել: Վարձակալությամբ տրամադրված, Վեդու քաղաքայի համայնքի սեփականություն հանդիսացող հողերից 022 ծածկագրով 0.121հա հողատարածքի վարձավճարի չափը փոփոխել և սահմանել 16000 ՀՀ դրամ:*

*Ավագանու անդամներ*

*Է.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ կողմ*

*Լ.ՄԱՆՈՒԿՅԱՆ կողմ*

*Ա.ՍԱՐԳՍՅԱՆ կողմ*

*Դ.ՍԱՐՈՅԱՆ կողմ*

*Ա.ՍԱՖԱՐՅԱՆ կողմ*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՔԱՐՍԵՂՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
### ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄN17

*15 /05/2012թ.*

*ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻ ՔԱՐՏԵԶԻ* 03-0004-0015-0055 *ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ,ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ:*

*Քվեարկության արդյունքում Վեդու քաղաքային համայնքի ավագանին ղեկավարվելով ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշմամբ.*

## *ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝*

*Թույլատրել քաղաքապետարանին Վեդի քաղաքի Արարատյան 72/2 հասցեում գտնվող, Վարդան Խաչատրյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, 03-0004-0015-0055 ծածկագրով 0.0085հա մակերեսով բնակելի նշանակության հողամասի նպատակային նշանակությունը /համաձայն սեփականության իրավունքի գրանցման վկայականի/ փոխել բնակավայրերի հասարակական կառուցապատման, իսկ 122.52քմ մակերեսով շինության գործառնական նշանակությունը՝ հասարակականի: Առաջարկել համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություններ:*

*Ավագանու անդամներ*

*Է.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ* *կողմ* *Լ.ՄԱՆՈՒԿՅԱՆ* *կողմ*

*Ա.ՍԱՐԳՍՅԱՆ* *կողմ* *Դ.ՍԱՐՈՅԱՆ* *կողմ*

*Ա.ՍԱՖԱՐՅԱՆ* *կողմ*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Վ.ԲԱՐՍԵՂՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄN16

15 /05/2012թ.

ՎԵԴՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ 076 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԱՌԱՋԻՆ ԱՆՑՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 870քմ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Քվեարկության արդյունքում Վեդու քաղաքային համայնքի ավագանին ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի պահանջով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Թույլատրել քաղաքապետարանին Վեդու քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող, կադաստրային քարտեզում 076 ծածկագրում, Վեդի քաղաքի Թումանյան փողոց 1-ին անցուղում գտնվող բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում առանձնացնել 870քմ անշարժ գույքի առանձին միավոր և օտարել աճուրդ-վաճառքի կարգով: Օտարման մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 50%-ի չափով, ընդամենը 540.270 ՀՀ դրամ:

Ավագանու անդամներ

Է.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ կողմ Լ.ՄԱՆՈՒԿՅԱՆ կողմ

Ա.ՍԱՐԳՍՅԱՆ կողմ Դ.ՍԱՐՈՅԱՆ կողմ

Ա.ՍԱՖԱՐՅԱՆ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՔԱՐՄԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄN15

15 /05/2012թ.

*ՎԵԴՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՎԵԴԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ 80 .ՔՄ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:*

*Քվեարկության արդյունքում Վեդու քաղաքային համայնքի ավագանին ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի պահանջով.*

## *ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝*

*Թույլատրել քաղաքապետարանին Վեդու քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող, Արարատյան փողոցում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում առանձնացնել 80քմ անշարժ գույքի առանձին միավոր և օտարել աճուրդ վաճառքի կարգով: Օտարման մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով, ընդամենը՝ 99360 ՀՀ դրամ:*

*Ավագանու անդամներ*

*Է.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ* *կողմ* — *Լ.ՄԱՆՈՒԿՅԱՆ* *կողմ*

*Ա.ՍԱՐԳՍՅԱՆ* *կողմ* — *Դ.ՍԱՐՈՅԱՆ* *կողմ*

*Ա.ՍԱՖԱՐՅԱՆ* *կողմ*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Վ.ՔԱՐՍԵՂՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
### ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄN14

---

*15 /05/2012թ*

*ՎԵԴՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՔԱՐՏԵԶՈՒՄ ՎԵԴԻ ՔԱՂԱՔԻ ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ 600.ՔՄ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:*

*Քվեարկության արդյունքում Վեդու քաղաքային համայնքի ավագանին ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի պահանջով.*

*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝*

*Թույլատրել քաղաքապետարանին Վեդու քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող Արտակ Խաչատրյան փողոցում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում առանձնացնել 600քմ անշարժ գույքի առանձին միավոր և օտարել աճուրդ վաճառքի կարգով: Օտարման մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 50%-ի չափով, ընդամենը՝ 372.600 ՀՀ դրամ:*

*Ավագանու անդամներ*

| | | | |
|---|---|---|---|
| *Է.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ* | *կողմ* | *Լ.ՄԱՆՈՒԿՅԱՆ* | *կողմ* |
| *Ա.ՍԱՐԳՍՅԱՆ* | *կողմ* | *Դ.ՍԱՐՈՅԱՆ* | *կողմ* |
| *Ա.ՍԱՖԱՐՅԱՆ* | *կողմ* | | |

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ԲԱՐՍԵՂՅԱՆ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
### ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N13

15 /05/2012թ.

*ՎԵԴՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ 076 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ, ՎԵԴԻ ՔԱՂԱՔԻ Ս.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ 362.ՔՄ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ և ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:*

*Քվեարկության արդյունքում Վեդու քաղաքային համայնքի ավագանին ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի պահանջով.*

### *ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝*

*Թույլատրել քաղաքապետարանին Վեդու քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող կադաստրային քարտեզում 076 ծածկագրում, Վեդի քաղաքի Ս.Նիկողոսյան փողոցում գտնվող բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում առանձնացնել 362.3քմ անշարժ գույքի առանձին միավոր և օտարել աճուրդ վաճառքի կարգով: Օտարման մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով, ընդամենը 449.977 ՀՀ դրամ:*

*Ավագանու անդամներ*

*Է.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ* կողմ *Լ.ՄԱՆՈՒԿՅԱՆ* կողմ

*Ա.ՍԱՐԳՍՅԱՆ* կողմ *Դ.ՍԱՐՈՅԱՆ* կողմ

*Ա.ՍԱՖԱՐՅԱՆ* կողմ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Վ.ԲԱՐՍԵՂՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N12

*15/05/2012թ.*

*ՎԵԴՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ 076 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԱՌԱՋԻՆ ԱՆՑՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 1000 քմ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ և ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:*

*Քվեարկության արդյունքում Վեդու քաղաքային համայնքի ավագանին ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի պահանջով.*

## *ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝*

Թույլատրել քաղաքապետարանին Վեդու քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող, կադաստրային քարտեզում 076 ծածկագրով թաղամասում, Թումանյան փողոց առաջին անցուղում գտնվող բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում առանձնացնել 1000 քմ անշարժ գույքի առանձին միավոր և այն օտարել աճուրդ-վաճառքի կարգով: Օտարման մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով, ընդամենը՝ 1242000 ՀՀ դրամ:

*Ավագանու անդամներ*

*Է.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ* կողմ *Լ.ՄԱՆՈՒԿՅԱՆ* կողմ

*Ա.ՍԱՐԳՍՅԱՆ* կողմ *Դ.ՍԱՐՈՅԱՆ* կողմ

*Ա.ՍԱՖԱՐՅԱՆ* կողմ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Վ.ԲԱՐՍԵՂՅԱՆ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ**
ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N11

*15/05/2012թ.*

*ՎԵԴՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ,ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ և ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:*

*Քվեարկության արդյունքում Վեդու քաղաքային համայնքի ավագանին ղեկավարվելով /Տեղական ինքնակառավարման մասին՝ ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի, Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքի, ՀՀ հողային օրենսգրքի և ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշման պահանջով.*

## *ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝*

*1.Թույլատրել քաղաքապետարանին Վեդու քաղաքային համայնքի կադաստրային քարտեզում 011-017 և 011-018 ծածկագրերում կատարել հողամասերի սահմանների փոփոխություն, համաձայն կից հատակագծերի:*

*2.Վեդու քաղաքային համայնքի ճշգրտված կադաստրային քարտեզում կատարել 011-017 ծածկագրով 0.0510հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակությամբ բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ ճանաչել Վեդու քաղաքային համայնքի սեփականությունը:*

*3.Թույլատրել քաղաքապետարանին օրենքով սահմանված աճուրդային կարգով օտարել համայնքային սեփականության 011-017 ծածկագրով 0.0510հա բնակելի կառուցապատման հողամասը, մեկնարկային գինը սահմանել տվյալ պահին գործող հողի կադաստրային արժեքի 100 տոկոսի չափով, ընդամենը 633,420 ՀՀ դրամ:*

*Ավագանու անդամներ*

| | | | |
|---|---|---|---|
| *Է.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ* | *կողմ* | *Լ.ՄԱՆՈՒԿՅԱՆ* | *կողմ* |
| *Ա.ՍԱՐԳՍՅԱՆ* | *կողմ* | *Դ.ՍԱՐՈՅԱՆ* | *կողմ* |
| *Ա.ՍԱՖԱՐՅԱՆ* | *կողմ* | | |

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Վ.ԲԱՐՍԵՂՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
### ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N10

*15/05/2012թ.*

*ՎԵԴՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 225 ԹԱՂԱՄԱՍԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ 0.1565 ՀԱ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՎՈՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ, ԱՅՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:*

*Քվեարկության արդյունքում Վեդու քաղաքային համայնքի ավագանին ղեկավարվելով /Տեղական ինքնակառավարման մասին՝ ՀՀ օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի պահանջով.*

## *ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝*

*Թույլատրել քաղաքապետարանին Վեդու քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող, կադաստրային քարտեզի 225 թաղամասային ծածկագրում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամասում առանձնացնել 0.1565հա անշարժ գույքի միավոր և այն աճուրդային կարգով օտարել: Օտարման մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով:*

*Ավագանու անդամներ*

*Է.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ կողմ*

*Լ.ՄԱՆՈՒԿՅԱՆ կողմ*

*Ա.ՍԱՐԳՍՅԱՆ կողմ*

*Դ.ՍԱՐՈՅԱՆ կողմ*

*Ա.ՍԱՖԱՐՅԱՆ կողմ*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Վ.ԲԱՐՍԵՂՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N9

15 \05\2012թ.

*ՎԵԴՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 458 ԹԱՂԱՄԱՍԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ 1.5352 ՀԱ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՎՈՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ, ԱՅՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ և ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:*

*Քվեարկության արդյունքում Վեդու քաղաքային համայնքի ավագանին ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի պահանջով.*

## *ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝*

*Թույլատրել քաղաքապետարանին Վեդու քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող, կադաստրային քարտեզի 458 թաղամասային ծածկագրում գտնվող, գյուղատնտեսական նշանակության հողամասում առանձնացնել 1.5352հա անշարժ գույքի միավոր և աճուրդային կարգով օտարել: Օտարման մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ ընդամենը 88274 ՀՀ դրամ արժեքով:*

*Ավագանու անդամներ*

*Է.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ* կողմ *Լ.ՄԱՆՈՒԿՅԱՆ* կողմ

*Ա.ՍԱՐԳՍՅԱՆ* կողմ *Դ.ՍԱՐՈՅԱՆ* կողմ

*Ա.ՍԱՖԱՐՅԱՆ* կողմ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Վ.ՔԱՐՄԵՂՅԱՆ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ**
**ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

# ՈՐՈՇՈՒՄ N8

*15/05/2012թ.*

*ՎԵԴՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ 458 ԹԱՂԱՄԱՍԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ 1.1155 ՀԱ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՎՈՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ, ԱՅՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ և ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:*

*Քվեարկության արդյունքում Վեդու քաղաքային համայնքի ավագանին ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի պահանջով.*

## *ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝*

*Թույլատրել քաղաքապետարանին Վեդու քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող, կադաստրային քարտեզում 458 թաղամասային ծածկագրում գտնվող, գյուղատնտեսական նշանակության հողամասում սահմանված կարգով առանձնացնել 1.1155հա անշարժ գույքի միավոր և աճուրդային կարգով օտարել: Օտարման մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100% տոկոսի չափով՝ ընդամենը 64142 ՀՀ դրամ:*

*Ավագանու անդամներ*

*Է.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ* կողմ

*Լ.ՄԱՆՈՒԿՅԱՆ* կողմ

*Ա.ՍԱՐԳՍՅԱՆ* կողմ

*Դ.ՍԱՐՈՅԱՆ* կողմ

*Ա.ՍԱՖԱՐՅԱՆ* կողմ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Վ.ՔԱՐՄԵՂՅԱՆ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ**
**ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

# ՈՐՈՇՈՒՄ N7

*15 /05/2012թ.*

*ՎԵԴՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՏԵԶԻ 087-050 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ՀԱՄԱՁԱՅՆ ՎԵԴՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ:*

*Քվեարկության արդյունքում Վեդու քաղաքային համայնքի ավագանին ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի և քաղաքաշինության մասին ՀՀ օրենքի 14 3 հոդվածի 9-րդ կետի պահանջով.*

## *ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝*

*1. Թույլատրել քաղաքապետարանին Վեդի քաղաքի Արարատյան 52/1 հասցեում գտնվող, Լիլիթ Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող 087-050 ծածկագրով 18.0քմ մակերեսով արդյունաբերական ընդերքօգտագործման հողամասի նպատակային նշանակությունը, Վեդու քաղաքային համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան փոխել որպես բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամաս:*

*2. Առաջարկել համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություններ:*

*Ավագանու անդամներ*

| | | | |
|---|---|---|---|
| *Է.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ* | *կողմ* | *Լ.ՄԱՆՈՒԿՅԱՆ* | *կողմ* |
| *Ա.ՍԱՐԳՍՅԱՆ* | *կողմ* | *Դ.ՍԱՐՈՅԱՆ* | *կողմ* |
| *Ա.ՍԱՖԱՐՅԱՆ* | *կողմ* | | |

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Վ.ԲԱՐՍԵՂՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N6

**15/ 05/2012թ.**

*ՀՐԱՊԱՐԱԿԻ և ՓՈՂՈՑԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:*

*Քվեարկության արդյունքում Վեդու քաղաքային համայնքի ավագանին ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 21-րդ կետի պահանջներով.*

*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝*

*Վեդի քաղաքի Արարատյան, Գայի և Ս.Վարդանյան 1-ին նրբանցքի հատման վայրում գտնվող* հրապարակը և այդ հրապարակից դեպի Կայան փողոց ձգվող փողոցը անվանակոչել Գերասիմ Ջալիբեկի Սարոյանի անվամբ:

*Ավագանու անդամներ*

*Է.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ* *կողմ* *Լ.ՄԱՆՈՒԿՅԱՆ* *կողմ*

*Ա.ՍԱՐԳՍՅԱՆ* *կողմ* *Դ.ՍԱՐՈՅԱՆ* *կողմ*

*Ա.ՍԱՖԱՐՅԱՆ* *կողմ*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Վ.ԲԱՐՍԵՂՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 5

15/05/2012թ.

## ՎԵԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2012թ. 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Քննարկության արդյունքում Վեդու քաղաքային համայնքի ավագանին ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի պահանջներով.*

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

*Հաստատել 2012թ. 1-ին եռամսյակի բյուջեի կատարման վերաբերյալ հաղորդումը՝ համաձայն հավելվածի:*

*Ավագանու անդամներ*

| | | | |
|---|---|---|---|
| Է.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ | կողմ | Լ.ՄԱՆՈՒԿՅԱՆ | կողմ |
| Ա.ՍԱՐԳՍՅԱՆ | կողմ | Դ.ՍԱՐՈՅԱՆ | կողմ |
| Ա.ՍԱՖԱՐՅԱՆ | կողմ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

*Հավելված*
*Վերու քաղաքային համայնքի ավագանու*
*15.05.2012.թ.թիվ 5 որոշման*

*Վերու քաղաքապետարանի 2012թ. 1-ին եռամսյակի բյուջեի կատարման վերաբերյալ հաղորդումը հաստատելու մասին:*

2012թ.-ի բյուջեի եկամտային մասը պլանավորված է 53709.0 հազար դրամ, որը կատարվել է 10568.1 հազար դրամով, պլանը կատարվել է 19.7 %-

Հողի հարկը պլանավորված 21400.0 հազարի դիմաց կատարվել է 1290.7 հազար դրամով, պլանը կատարվել է 40.0 %-ով:

Գույքահարկը պլանավորված 19000.0 հազարի դիմաց կատարվել է 5615.0 հազար դրամով, պլանը կատարվել է 29.6 %-ով:

Տեղական տուրքերը պլանավորված 4309.0 հազար դիմաց կատարվել է 1200.9 հազար դրամով, պլանը կատարվել է 27.9 %-ով:

Պետական տուրքը պլանավորված 9000.0 հազարի դրամի դիմաց կատարվել է 2461.5 հազարի դրամով, պլանը կատարվել է 27.4 %-ով:

Ոչ հարկային եկամուտները պլանավորված 23367.7 հազարի դիմաց կատարվել է 2874.5 հազար դրամով, պլանը կատարվել է 12.3 %-ով:

Դոտացիա պետբյուջեից պլանավորված 159833.6 հազարի դիմաց կատարվել է 39958.4 հազար դրամով, պլանը կատարվել է 25%-ով:

Ֆոնդային բյուջեն պլանավորված 30000.0 հազարի դիմաց կատարվել է 1717.2 հազար դրամով, պլանը կատարվել է 5.7 %-ով:

Հավաքագրված եկամուտները համապատասխանաբար ծախսվել են ըստ պլանավորված բյուջեի հետևյալ ուղղություններով.

- Տեղական ինքնակառավարում - պլանվորված 54901.3 հազար դրամ ծախսի դիմաց, կատարվել է 12739.1 հազար դրամով, պլանը կատարվել է 23.2 %-ով,
- Կրթություն և գիտություն - պլանվորված 38700.0 հազար դրամ ծախսի դիմաց, կատարվել է 8900.0 հազար դրամով, պլանը կատարվել է 23.0 %-ով,
- Մշակույթ և սպորտ - պլանվորված 57200.0 հազար դրամ ծախսի դիմաց, կատարվել է 14330.0 հազար դրամով, պլանը կատարվել է 25.1 % ով
- Բնակկոմունալ տնտեսություն - պլանվորված 47213.0 հազար դրամ ծախսի դիմաց, կատարվել է 7117.2 հազար դրամով, պլանը կատարվել է 15.1 %-ով,
- Այլ ծախսեր պլանվորված 18892.0 հազար դրամ ծախսի դիմաց, կատարվել է 4234.0 հազար դրամով, պլանը կատարվել է 22.4 %-ով

Ընդհանուր ծախսային մասը պլանվորված 273312.5 հազար դրամ ծախսի դիմաց, կատարվել է 59792.8 հազար դրամով, պլանը կատարվել է 21.9 %-ով:

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ __գ. Վեդի__ ______ ՀԱՄԱՅՆՔԻ __2012__ __ ԲՅՈՒՋԵԻ

ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ «__01__» __04__ __2012__ թ.

| N | | Եկամուտների անվանումը | Տարեկան բյուջեն | 2012 թ. հաշվետու ժամանակաշրջան /1-ին եռամսյակ, 1-ին կիսամյակ, 9-ամիս, տարին/ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Խումբ | Ենթախումբ | | պլան | պլան | փաստ | կատար. % | կատար. % տարեկան պլանի նկատմամբ |
| | | | հազ. դրամ | | | | |
| | | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | | | | | |
| 1 | | Տեղական ինքնակառավարում | 54901.3 | 13725.3 | 12739.1 | 92.8 | 23.2 |
| 2 | | Հասարակական վարձատրվող աշխատանքներ | | | | | |
| 3 | | Կրթություն և գիտություն | 38700.0 | 9675.0 | 8900.0 | 92.0 | 23.0 |
| 4 | | Առողջապահություն | | | | | |
| 5 | | Նախորդ տարի | 18153.0 | 4538.3 | 6860.0 | 151.2 | 37.8 |
| 6 | | Մշակույթ և սպորտ | 57200.0 | 14300.0 | 14330.0 | 100.2 | 25.1 |
| 7 | | Բնակկոմունալ տնտեսություն | 47213.0 | 11803.3 | 7117.2 | 60.3 | 15.1 |
| | 7.1 | Ճանապարհների վերանորոգում | | | | | |
| | 7.2 | Սան.մաքրում | | | | | |
| | 7.3 | Կանաչապատում/աղբահանություն/ | 14520.0 | 3630.0 | 900.0 | 24.8 | 6.2 |
| | 7.4 | Արտաքին լուսավորություն | 2800.0 | 700.0 | | 0.0 | 0.0 |
| | 7.5 | Հարազատներ չունեցող մարդկանց թաղում | | | | | |
| | 7.6 | Ջրային կառույցների շահագործում | 4208.0 | 1052.0 | 4208.0 | 400.0 | 100.0 |
| | 7.7 | Այլ ծախսեր | 18892.0 | 4723.0 | 4234.0 | 89.6 | 22.4 |
| 8 | | ՔԿԱԳ Բաժին | 2525.2 | 631.3 | 504.5 | 79.9 | 20.0 |
| 9 | | Գյուղատնտեսություն | 1200.0 | 300.0 | | 0.0 | 0.0 |
| 10 | | Անտառային,ջրային և ձկնաբուծական տնտեսություն | | | | | |
| 11 | | Լեռնային արդյունաբերություն և հանքային հանածոներ | | | | | |
| 12 | | Պահուստային ֆոնդ | | | | | |
| 13 | | այլ ծախսեր | | | | | |
| II | | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | 13000.0 | 3250.0 | | 0.0 | 0.0 |
| | 1 | Կապիտալ շինարարություն | | | | | |
| | 2 | Կապիտալ վերանորոգում | | | | | |
| | 3 | Վարկերի և այլ փոփոխությունների մարում | | | | | |
| | 4 | Պահուստների ձևավորում | | | | | |
| | III | Ծախսեր Ընդամենը | 273312.5 | 68328.1 | 59792.8 | 87.5 | 21.9 |
| | | Տարեվերջի մնացորդ | | | | | |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ *Ա. Առաքելյան*